Հավելված 10
« ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 » ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

«_____» 04. 2018 թ.**

ք. Երևան

« ,,Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն . ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ասատուր Ասատրյանի/ նույնականացման քարտ՝ 007355209, տրված 010-ի կողմից 2016-03-09/
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է « Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված՝ « ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 » ծածկագրով գնման ընթացակարգին:

1.1 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.2 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.4 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.5 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.6 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.7 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
ընկերության անվանումը

ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ.2/2
ընկերության հասցեն

«Ամերիաբանկ»ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ 1570005065330100
ընկերության բանկային հաշվեհամարը

01222567
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Տնօրեն՝ Ա.Ասատրյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

*** լրացվում է մասնակցի կողմից*

1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1]
2. Թիվ	
3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Նատալի Ֆարմ»ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 1570005065330100	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01222567	
8. Վճարողի ՀՇՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ « Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	
10. Շահառուի ՀՇՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 05539526	
12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ « Արարատբանկ» ԲԲԸ Գյումրու մ/ճ	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)՝ 1510019952250100	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 282 766 / երկու հարյուր ութսուներկու հազար յոթ հարյուր վաթսունվեց /	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ **ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10**	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>	
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/
24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

04.04.2018թ . N <<ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10>> ծածկագրով կնքված պայմանագրի շրջանակներում

Ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ

10.04.2018թ

ք.Գյումրի

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ, ի դեմս տնօրեն՝ Արմեն Իսահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ) , մի կողմից **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ**-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն **Ա. Ասատրյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կեղմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով **04.04.2018թ N <<ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10>>** պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 3.2 կետը, ինչպես նաև հաշվի առնելով, որ ֆինանսական միջոցներ նախատեսվել են, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1Հետագա համագործակցության նպատակով և հիմք ընդունելով Պայմանագրի 3.2 կետը կողմերը որոշեցին հաստատել պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (կցվում է)՝ պայմանագրի գործողության ժամկետը նախատեսելով մինչև 2018թ-ի դեկտեմբերի 20-ը, և սահմանելով, որ սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2018թ-ի ապրիլի 11-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

1.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը :
1.2 Սույն պայմանագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
1.3 Սույն պայմանագիրը և հավելվածը կազմված են _ էջից, կնքվում են հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որորնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Գնորդ»	**«ՎԱՃԱՌՈՂ »**
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Նատալի ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3	Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ՀՎՀՀ 05539526	ՀՎՀՀ 01222567
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»ԲԲԸ, Գյումրիի մ/ճ	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15100199522500100	Հ/Հ 1570005065330100
Տնօրեն----------Ա.Իսահակյան	Տնօրեն՝ ----------Ա.Ասատրյան

ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10

ք.Գյումրի «04» ապրիլ 2018 թ.

<<Գյումրու բժշկական կենտրոն>>ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն՝ Արմեն Իսահակյանի, որը գործում է-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են10օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2827667.5 /երկու միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր վաթսունյոթ/ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) ***լրացուցիչ համաձայնագրով կնքված վճարման ժամանակացույցի համաձայն*** նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[1] *Պայմանագիրը«Գնումների մասին» ՀՀօրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարածգվելմինչևպայմանագրով այդժամկետըլրանալը՝Վաճառողիառաջարկությանառկայությանդեպքում,պայմանով, որԳնորդիմոտչիվերացելապրանքիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարածգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայցչավելքանպայմանագրովսահմանվածժամկետնէ:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[3]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«Գյումրուբժշկականկենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3
ՀՎՀՀ 05539526
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏՈՒՄ» ՍՊԸ Գյումրիում/ճ
Հ/Հ 15100195225010[illegible]

Տնօրեն ——— Ա.Ինսպեկտորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ՀՎՀՀ 01222567
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100

Տնօրեն ——— Ա.Ասատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1

« 04 » 04 20 18թ. կնքված

ԳԲԿ1-ԳՀԱՊՁԲ-18/2-10 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Ապրանքի մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
2	33671126/301	բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ) R05CB02		Բրոմհեքսին bromhexine դեղահատ 8մգ	հատ	2,8	28000	10000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	10000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
3	33621750/301	նիֆեդիպին c08ca05		Նիֆեդիպին Nifedipine դեղահատ 10 մգ	հատ	13,89	3472,5	250	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	250	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
4	33621480/322	պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին) C09AA04		Պերինդոպրիլ perindopril դեղահատ 10մգ	հատ	149,9	224850	1500	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	1500	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
5	33611440/321	թիամին (թիամինի հիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինի նատրիումական ֆոսֆատ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), նիկոտինամիդ A11EX		թիամին (թիամինի հիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինի նատրիումական ֆոսֆատ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), նիկոտինամիդ դեղանյութ	սրվակ	149,66	134694	900	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	900	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

7	33631430/301	դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ) M01AE17		Դեքսկետոպրոֆեն dexketoprofen լուծույթ ն/ե և մ/մ ներարկման 25մգ/մլ, 2մլ	սրվակ	509	50900	100	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	100	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
9	33661116/323	լիդոկային c01bb01, c05ad01, d04ab01, n01bb02, r02ad02, s01ha07, s02da01		Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ	սրվակ	24,75	61875	2500	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	2500	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
10	33661116/322	լիդոկային c01bb01, c05ad01, d04ab01, n01bb02, r02ad02, s01ha07, s02da01		Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ ներարկման 20մգ/մլ, 20մլ	սրվակ	699,6	209880	300	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	300	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
13	**33651168/301**	կանամիցին 1գ		Կանամիցին kanamycin դեղափոշի մ/մ ներարկման լուծույթի,	սրվակ	202,4	24288	120	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	120	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
15	33691218/322	մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի		Մագնեզիում ասպարտատ, կալիում ասպարտատ magnesium aspartate , potassium aspartate դեղահատ	հատ	5	7500	1500	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	1500	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
18	33621620/323	սպիրոնոլակտոն c03da01		Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղապատիճ 25 մգ	հատ	35	157500	4500	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	4500	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

20	33651112/301	ամօքսիցիլին+քլ ավուլանաթթու j01cr02		Ամօքսիցիլին , քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղահատ 500մգ+125	հատ	116,4	116400	1000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	1000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
24	33621120/322	էնօքսապարին b01ab05		էնօքսապարին enoxaparin լուծույթ ներարկման 80մգ/0,8մլ, 0,8մլ նախապատրաստված	հատ	4000	400000	100	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	100	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
27	33642210/321	պրեդնիզոլոն a07ea01, c05aa04, d07aa03, d07xa02, h02ab06, r01ad02, s01ba04, s01cb02, s02ba03, s03ba02		Պրեդնիզոլոն Prednisolone դեղահատ 5 մգ	հատ	7	7000	1000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	1000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
30	33691222/302	ցինարիզին-N07CA02		Ցինարիզին/պիրացետամ, cinarizin/piracetam, դեղահատ 25/400մգ	հատ	29,21	52578	1800	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	1800	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
31	33691144/321	նատրիումի թիոսուլֆատ v03ab06		Նատրիումի թիոսուլֆատ, Sodium Thiosulfate, լուծույթ	սրվակ	43,55	87100	2000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	2000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
36	33621763/301	Նեբիվոլոլ /նեբիվոլոլի հիդրոքլորիդ/ C07AB12		Նեբիվոլոլ /նեբիվոլոլի հիդրոքլորիդ/, Nebivololi hidroqloridi, դեղահատ 5մգ	հատ	104	58240	560	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	560	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
39	33621730/322	վերապամիլ c08da01		Վերապամիլ verapamil դեղահատ 40մգ	հատ	17,6	26400	1500	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	1500	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

40	33610000/323	դեղամիջոցներ՝ ստամոքսաղիքայ ին տրակտի — Բիսակոդիլ մոմիկներ		Բիսակոդիլ bisacodyl մոմիկներ ուղիղաղիքայի ն 10մգ bisacodyl մոմիկներ ուղիղաղիքայի	հատ	49,6	99200	2000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	2000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
42	33631110/321	նիստատին a07aa02, d01aa01, g01aa01		Նիստատին nystatin դեղահատ 500000ՄՄ	հատ	13	26000	2000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	2000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
43	33611150/321	պանկրեատին a09a		Պանկրեատին (լիպազ 3500ԵՖՄ, ամիլազ 4200 ԵՖՄ, պրոտեազ 250ԵՖՄ) pancreatin (lipase 3500PhEU, amylase 4200 PhEU, protease	հատ	34,3	20580	600	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	600	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
45	33621370/301	իզոսորբիդի դինիտրատ c01da08, c05ae02		Իզոսորբիդի դինիտրատ, Isosorbide Dinitrate դեղահատ երկարատև ձերբազատմամ բ 20մգ	հատ	29	145000	5000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	5000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

47	33671135/301	կալցիումի քլորիդ B05XA07		Կալցիումի քլորիդ calcium chloride լուծույթ ներարկման 100մգ/մլ, 5մլ	սրվակ	37,1	11130	300	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	300	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
52	33621240/321	ցիանոկոբալամին b03ba01		Ցիանոկոբալամին cyanocobalamin, լուծույթ մ/մ կամ ե/մ ներարկման, 0,5 մգ/մլ, 1մլ	սրվակ	18,68	46700	2500	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	2500	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
58	33661149/321	ացետազոլամիդ s01ec01		Ացետազոլամիդ, acetazolamide դեղահատ 250մգ	հատ	80	24000	300	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	300	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
60	33691140/301	ացետիլցիստեին r05cb01, v03ab23, s01xa08		Ացետիլցիստեին acetylcysteine դեղահատ 200մգ	հատ	93	18600	200	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	200	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
67	33621120/321	էնոքսապարին b01ab05		Էնոքսապարին enoxaparin լուծույթ ներարկման 40մգ/0,4մլ, 0,4մլ նախաստեղծ	հատ	1373	411900	300	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	300	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
68	33621300/301	էթիլբրոմիզովալերիանատ, ֆենոբարբիտալ, պղպեղային անանուխի յուղ N05CM		էթիլբրոմիզովալերիանատ, ֆենոբարբիտալ, պղպեղային անանուխի յուղ ethylbromizoval	հատ	144	8640	60	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	60	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

70	33661160/321	պլատիֆիլին A03AX14		պլատիֆիլին platyphylline լուծույթ ներարկման 2մգ/մլ 1մլ	սրվակ	100	200000	2000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	2000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
71	33611370/321	թիամին a11da01		թիամին thiamine լուծույթ ներարկման 50մգ/մլ 1մլ	սրվակ	18,64	111840	6000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	6000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
72	33621761/301	ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ B01AC30		Ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ acetylsalicylic acid, magnesium hydroxide դեղահատ	հատ	26,7	53400	2000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	2000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

ԳՆՈՐԴ

«Գյումրուբժշկականկենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3
ՀՎՀՀ 05539526
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»ԲԲԸ, Գյումրիիմ/ճ
Հ/Հ 1510019952250100

Տնօրեն ——— Ա.Իսահակյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ՀՎՀՀ 01222567
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100

Տնօրեն ——— Ա.Ասատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«04» 04 2018 թ. կնքված
N ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	33671126/301	բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ) R05CB02				3111,111111	3111,111111	3111,111111	3111,111111	3111,111111	3111,111111	3111,111111	3111,111111	3111,111111	28000
3	33621750/301	նիֆեդիպին c08ca05				385,8333333	385,8333333	385,8333333	385,8333333	385,8333333	385,8333333	385,8333333	385,8333333	385,8333333	3472,5
4	33621480/322	պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին) C09AA04				24983,33333	24983,33333	24983,33333	24983,33333	24983,33333	24983,33333	24983,33333	24983,33333	24983,33333	224850
5	33611440/321	թիամին (թիամինի հիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինի նատրիումական ֆոսֆատ),				14966	14966	14966	14966	14966	14966	14966	14966	14966	134694
7	33631430/301	դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ) M01AE17				5655,555556	5655,555556	5655,555556	5655,555556	5655,555556	5655,555556	5655,555556	5655,555556	5655,555556	50900
9	33661116/323	լիդոկային c01bb01, c05ad01, d04ab01, n01bb02, r02ad02, s01ha07, s02da01				6875	6875	6875	6875	6875	6875	6875	6875	6875	61875
10	33661116/322	լիդոկային c01bb01, c05ad01, d04ab01, n01bb02, r02ad02, s01ha07, s02da01				23320	23320	23320	23320	23320	23320	23320	23320	23320	209880

13	**33651168/301**	կանամիցին 1գ				2698,666667	2698,666667	2698,666667	2698,666667	2698,666667	2698,666667	2698,666667	2698,666667	2698,666667	2698,666667	24288
15	33691218/322	[illegible] ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ				833,3333333	833,3333333	833,3333333	833,3333333	833,3333333	833,3333333	833,3333333	833,3333333	833,3333333	833,3333333	7500
18	33621620/323	սպիրոնոլակտոն c03da01				17500	17500	17500	17500	17500	17500	17500	17500	17500	17500	157500
20	33651112/301	ամօքսիցիլին+բլավոլանաթթու j01cr02				12933,33333	12933,33333	12933,33333	12933,33333	12933,33333	12933,33333	12933,33333	12933,33333	12933,33333	12933,33333	116400
24	33621120/322	էնօքսապարին b01ab05				44444,44444	44444,44444	44444,44444	44444,44444	44444,44444	44444,44444	44444,44444	44444,44444	44444,44444	44444,44444	400000
27	33642210/321	պրեդնիզոլոն a07ea01, c05aa04, d07aa03, d07xa02, h02ab06, r01ad02, s01ba04, s01cb02,				777,7777778	777,7777778	777,7777778	777,7777778	777,7777778	777,7777778	777,7777778	777,7777778	777,7777778	777,7777778	7000
30	33691222/302	ցինարիզին- N07CA02				5842	5842	5842	5842	5842	5842	5842	5842	5842	5842	52578
31	33691144/321	նատրիումի թիոսուլֆատ v03ab06				9677,777778	9677,777778	9677,777778	9677,777778	9677,777778	9677,777778	9677,777778	9677,777778	9677,777778	9677,777778	87100
36	33621763/301	Նեբիվոլոլ /Նեբիվոլոլի հիդրոքլորիդ/				6471,111111	6471,111111	6471,111111	6471,111111	6471,111111	6471,111111	6471,111111	6471,111111	6471,111111	6471,111111	58240
39	33621730/322	վերապամիլ c08da01				2933,333333	2933,333333	2933,333333	2933,333333	2933,333333	2933,333333	2933,333333	2933,333333	2933,333333	2933,333333	26400
40	33610000/323	դեղասրճոցներ ստամոքսաղիքային տրակտի —				11022,22222	11022,22222	11022,22222	11022,22222	11022,22222	11022,22222	11022,22222	11022,22222	11022,22222	11022,22222	99200
42	33631110/321	նիստատին a07aa02, d01aa01, g01aa01				2888,888889	2888,888889	2888,888889	2888,888889	2888,888889	2888,888889	2888,888889	2888,888889	2888,888889	2888,888889	26000
43	33611150/321	պանկրեատին a09a				2286,666667	2286,666667	2286,666667	2286,666667	2286,666667	2286,666667	2286,666667	2286,666667	2286,666667	2286,666667	20580
45	33621370/301	իզոսորբիդի դինիտրատ c01da08, c05ae02				16111,11111	16111,11111	16111,11111	16111,11111	16111,11111	16111,11111	16111,11111	16111,11111	16111,11111	16111,11111	145000
47	33671135/301	կալցիումի քլորիդ B05XA07				1236,666667	1236,666667	1236,666667	1236,666667	1236,666667	1236,666667	1236,666667	1236,666667	1236,666667	1236,666667	11130
52	33621240/321	ցիանոկոբալամին b03ba01				5188,888889	5188,888889	5188,888889	5188,888889	5188,888889	5188,888889	5188,888889	5188,888889	5188,888889	5188,888889	46700

58	33661149/321	ացետազոլամիդ s01ec01				2666,666667	2666,666667	2666,666667	2666,666667	2666,666667	2666,666667	2666,666667	2666,666667	2666,666667	24000
60	33691140/301	ացետիլցիստեին r05cb01, v03ab23, s01xa08				2066,666667	2066,666667	2066,666667	2066,666667	2066,666667	2066,666667	2066,666667	2066,666667	2066,666667	18600
67	33621120/321	Էնոքսապարին b01ab05				45766,66667	45766,66667	45766,66667	45766,66667	45766,66667	45766,66667	45766,66667	45766,66667	45766,66667	411900
68	33621300/301	Էթիլբրոմիզովալերիանատ, ֆենոբարբիտալ, պղպեղային անանուխի յուղ N05CM				960	960	960	960	960	960	960	960	960	8640
70	33661160/321	պլատիֆիլին A03AX14				22222,22222	22222,22222	22222,22222	22222,22222	22222,22222	22222,22222	22222,22222	22222,22222	22222,22222	200000
71	33611370/321	թիամին a11da01				12426,66667	12426,66667	12426,66667	12426,66667	12426,66667	12426,66667	12426,66667	12426,66667	12426,66667	111840
72	33621761/301	ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ B01AC30				5933,333333	5933,333333	5933,333333	5933,333333	5933,333333	5933,333333	5933,333333	5933,333333	5933,333333	53400
Ընդամենը																2827667,5

ԳՆՈՐԴ
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3
ՀՎՀՀ 05539526
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրի մասնաճյուղ
Հ/Հ 1570019032250100

Տնօրեն _____ Ա.Պետրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ՀՎՀՀ 01222567
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100

Տնօրեն _____ Ա.Ասատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

01222567
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»
"НАТАЛИ ФАРМ"
"NATALI FARM"

« 04 » 04 2018 թ. կնքված

N ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրիհամարը՝ _____

Պատվիրատուն՝իդեմս _____ և

Պայմանագրիկողմը՝իդեմս_____,

հիմքընդունելովՊայմանագրիկատարմանվերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝

գնմանհայտընախագծածներկայացուցչի N եզրակացությունայնմասին, որՊայմանագրովնախատեսված՝

սպորևնշվածմատակարարումներըհամապատասխանումենՊայմանագրովամրագրվածտեխնիկականբնութագրերին և

գնմանժամանակացույցին՝ կազմեցինսույնարձանագրությունըհետևյալիմասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըմատակարարելէհետևյալապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկականբնութագրիհամառոտշարադրանքը	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարմանենթակագումարը /հազարդրամ/	Վճարմանժամկետը /ըստվճարմանժամանակացույցի/
			ըստպայմանագրովիաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	ըստպայմանագրովիաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալմատակարարումներիկատարմանվերաբերյալբոլորհաշիվ-ապրանքագրերըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասըևկցվումեն:

Ապրանքըհանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքնընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« 04 » 04 2018 թ. կնքված
N ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրիարդյունքըԳնորդինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդիանվանումը Վաճառողիանվանումը
(այսուհետ՝ Վաճառող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափմանմիավորը	քանակը (փաստացի)

Սույնակտըկազմված է 2 օրինակից, յուրաքանչյուրկողմինտրամադրվում է մեկականօրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտընախագծածներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1

04.04.2018թ N <<ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10>> պայմանագրի

10.04.2018թ

ք.Գյումրի

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ, ի դեմս տնօրեն՝ Արմեն Իսահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ) , մի կողմից «**Նատալի Ֆարմ**» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն **Ա. Ասատրյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով **04.04.2018թ N <<ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10>>** պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 3.2 կետը, ինչպես նաև հաշվի առնելով, որ ֆինանսական միջոցներ նախատեսվել են, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով և հիմք ընդունելով Պայմանագրի 3.2 կետը կողմերը որոշեցին հաստատել պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (կցվում է)՝ պայմանագրի գործողության ժամկետը նախատեսելով մինչև 2018թ-ի դեկտեմբերի 20-ը, և սահմանելով, որ սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2018թ-ի ապրիլի 11-ից ծագած հարաբերությունների վրա:

2.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

1.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը :

1.2 Սույն պայմանագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

1.3 Սույն պայմանագիրը և հավելվածը կազմված են _ էջից, կնքվում են հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Գնորդ»	« Վաճառող»
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3	Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ՀՎՀՀ 05539526	ՀՎՀՀ 01222567
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրի	Բանկ՝ « Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15[illegible]	Հ/Հ 15700[illegible]0100
Տնօրեն՝ Ա. [illegible]	Տնօրեն՝ Ա. Ասատրյան

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1

04.04.2018թ N <<ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10>> պայմանագրի

10.04.2018թ

ք.Գյումրի

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ, ի դեմս տնօրեն՝ Արմեն Իսահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ) , մի կողմից «**Նատալի Ֆարմ**» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն **Ա. Ասատրյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, ղեկավարվելով << քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով **04.04.2018թ N <<ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-10>>** պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 3.2 կետը, ինչպես նաև հաշվի առնելով, որ ֆինանսական միջոցներ նախատեսվել են, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով և հիմք ընդունելով Պայմանագրի 3.2 կետը կողմերը որոշեցին հաստատել պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (կցվում է)՝ պայմանագրի գործողության ժամկետը նախատեսելով մինչև 2018թ-ի դեկտեմբերի 20-ը, և սահմանելով, որ սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2018թ-ի ապրիլի 11-ից ծագած հարաբերությունների վրա:

2.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

1.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը :

1.2 Սույն պայմանագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

1.3 Սույն պայմանագիրը և հավելվածը կազմված են _ էջից, կնքվում են հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Գնորդ»	« Վաճառող»
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3	Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ՀՎՀՀ 05[illegible]	ՀՎՀՀ 01222567
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» [illegible]	Բանկ՝ « Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 15100[illegible]	հ/հ 1570005065330100
Տնօրեն՝ Ա.Իսահակյան	Տնօրեն՝ Ա.Ասատրյան